

35. ԳՐԻԳՈՐ ԿԵՍԱՐԱՅԻ ԵՒ ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Մովսէս կաթողիկոսի եւ Ս. Աթոռի միջեւ փոխանակուած թղթակցութիւններու համա-
րաւը յուզեց Գրիգոր Կեսարացին, որ ի սկզբանէ անախի հակառակ էր Հռոմայ Եկեղեցւոյ հետ Միութեան գաղափարին: Տեսանք վերագոյն թէ ինչպէս ընդդիմացաւ անիկա Մելքիսեդեկ կաթողիկոսի նոյնօրինակ քայլերուն: Ի Կ. Պոլլիս անվերջ վիճարանութեան մէջ էր Յովհաննէս Խուլ եւ Զաքարիա Վանեցի պատրիարքներու հետ, որոնք տողորուած էին Միութեան գաղափարով:

Երբ լուր հասաւ Կեսարացւոյ, թէ Մովսէս կաթողիկոս 12 եպիսկոպոսներու համաձայնութեամբ «միաբանութեան թուղթ» մը գրած է Ուրբանոս Ը-ին, հակառակ իր աշակերտին եւ պաշտպանեալին հանդէպ տածած սիրոյն եւ յարգանքին չդանդաղեցաւ Գրիգոր գրել անոր յանդիմանական եւ մեղադրական թուղթ մը, որմէ բեկորներ միայն պահուած են մեզի¹: Կեսարացին տաքարիւն էր եւ պոռուկացող բնութեամբ, անդիջող որ եւ է փոփոխութեան ընթացիկ վիճակի, նորաձեւութեամբ եւ նորասիրութեամբ: Յառաջ կը բերեմ հատուածս².

«Լուեալ եմ անախորժելի համբաւ եւ տրամագոյն զրոյց եւ ցաւազին ասացուածս

¹ Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն Հայոց Ս. Եկեղեցւոյն ընդ մեծի Ս. Եկեղեցւոյն Հռովմայ. Հոմ 1658, Բ., 1, էջ 77—78, 101, 430 եւն:

² Անդ, Բ., 1, էջ 430: